

**ՀԱՄՇԵՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ.  
ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԵԱԼՆԵՐԸ ԵՎ ՀՐԱՏԱՊ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

*Հայկազուն Ալվրցյան*

**Ուլքե՞ր են համշենահայերը:** Համշենահայերը մինչև 19-րդ դարի 90-ական թվականները հիմնականում բնակվել են Թուրքիայի Մամսուն քաղաքից մինչև Բաթում ընկած ծովափնյա ընդարձակ տարածքներում: Պատմիչ Ղևոնդի վկայությամբ 788թ. Մեծ Հայքի Կոտայք և Արագածոտն գավառներից մոտ 12.000 մարդ, չղիմանալով արաբական իշխանության ճնշումներին, Աբաս Ամատունու և նրա որդի Համամ պայագատի գլխավորությամբ հեռանում է Հայաստանից և բնակություն հաստատում Բյուզանդական կայսրության մաս կազմող Պոնտոսում: Ի դեպ՝ Պոնտոսում հայերն ապրում էին հնագույն ժամանակներից: Հետագա դարերում նրանց թիվն ավելանում է քաղաքական և տնտեսական ճնշումների հետևանքով Հայաստանի տարբեր գավառներից արտագաղթածների հաշվին:

Նման մի խոշոր արտագաղթ էր նաև այս մեկը: Բյուզանդիայի կայսր Կոստանդինը սիրով ընդունում է հայերին, բնակեցնում բարեբեր հողերում, իսկ հայ նախարարներին նվիրում Տամբուր քաղաքը, որը կարճ ժամանակ անց պատերազմի հետևանքով հիմնովին ավերվում է: Համամ Ամատունին այն վերականգնում է և իր անունով կոչում Համամաշեն (այստեղից էլ՝ Համշեն):

Համամ Ամատունու հիմնադրած իշխանությունը գոյատևեց ուղիղ յոթ դար և կործանվեց 1489թ.: Այն Բյուզանդական, հետագայում՝ 13-րդ դ., Պոնտական կայսրության կազմում ուներ կիսանկախ դրություն: Օսմանյան կայսրության ստեղծումից կարճ ժամանակ անց հայերի և կայսրության քրիստոնյա մյուս ազգերի նկատմամբ սկսեց գործադրվել կրոնական և ազգային անհանդուրժողականության քաղաքականություն, որը հաճախ հանգեցնում էր պատերազմական գործողությունների: Թեև Համշենի իշխանությունը բավական հզոր էր, իսկ ժողովուրդը՝ քաջ և ազատատենչ, բայց հասկանալի է, որ Օսմանյան հզոր կայսրության մի քանի դար տևած ճնշումներին ու հալածանքներին չէր կարող դիմակայել:

Համշենահայերի դիմադրության պատմությունից հայտնի են բազմաթիվ հերոսական էջեր, սակայն սրանք հաճախ ավարտվում էին նրանց պարտությամբ, բռնի մահմեղականացմամբ ու կոտորածներով: Այս քաղաքականությունը վճռական փուլ մտավ 18-րդ դարի սկզբներին, ինչի հետևանքով համշենահայերը, խուսափելով կոտորածներից, սփռվում էին Սև ծովի ափով մեկ: Իսկ մահմեղականությունն ընդունածները փրկվում էին հետագա ճնշումներից ու կոտորածներից:

Դիմադրության ամենահզոր միջոցներն էին լեզվի, կրոնի, մշակույթի, սովորույթների, ծեսերի պահպանումն ու խառնամուսնությունից խուսափելը: Համշենահայերն այս հարցերում խիստ հետևողական էին: Թուրքական իշխանությունները հայերեն խոսելու համար սահմանել էին խոշոր տուգանքներ ու պատիժներ, անգամ կտրում էին հայերեն խոսողի լեզուն, ինչը վկայում է հզոր դիմադրության մասին: Վկայություններ կան, որ նույնիսկ մեկ դար անց որոշ բնակավայրերում հայերն ընդվզում ու վերադառնում են իրենց հավատքին: «Պատմութիւն Պոնտոսի» աշխատության հեղինակ Մ.Բժշկյանը 19-րդ դարի սկզբին շրջագայել է այդ վայրերում և իսլամացած համշենահայերի մասին գրել. «Համշենցիք կէս կէս են (կէս քրիստոնյա, կէս իսլամ), շատերը դարձած են, բայց քրիստոնեության սովորութիւնը կը պահեն, ժամոց և ողորմութիւնը պակաս չեն ըներ. գրեթէ ամէնքը Վարդավառին և Վերափոխման կ'երթան եկեղեցին, մոմ կը վառեն, մատաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար... Կան ծերեր, որ գիտեն քրիստոնեութիւն, կը պատուին խաչը եւ ծածուկ ողորմութիւն կուտան ժամերուն»:

Բազմաթիվ նման վկայություններ կան նաև օտար աղբյուրներում: Ամերիկացի բողոքական միսիոներներ Սմիթն ու Դուայթը ճամփորդել են այս կողմերում և 1831թ. Լոնդոնում, ապա՝ 1833թ. Բոստոնում հրատարակած ճամփորդական նոթերում գրում են. «Հայերի մեջ նույնպես ...մի զգալի մասը դավանում է մահմեղականություն: Շրջանը, որտեղ նրանք բնակվում էին... կոչվում է Համշեն: Մեր գրուցակիցը՝ տրապիզոնցի մի կաթողիկե հայ, ասաց, որ բնակչությունը մոտ 3-4 հազար հայ ընտանիք է, որոնք բնակվում են 70 կամ 80 գյուղերում: Մեծամասնությունը մահմեղականություն է ընդունել մոտ 200 տարի առաջ, բայց նրանք առ այսօր խոսում են հայերեն, և շատերի կանայք ուրիշ լեզու չգիտեն»:

Չնայած մշտական ճնշումներին, բռնություններին ու հալածանքներին՝ համշենահայերի կիսանկախ վիճակը դեռ երկար պահպանվում է: Հենվելով 19-րդ դարի հեղինակ, Համշենում ճանապարհորդած Կ.Կոխի վկայությունների վրա՝ Հ.Տաշյանը գրում է. «Այդպիսի դժուարամուտ լեռանց մեջ դիրքին էր իշխանաց կէս-անկախ դրութիւն մը պահել: Նաեւ օսմանեան տիրապետութեան տակ երկար տեւած է այս վիճակը, եւ Քոխ գեղեցիկ կը

նկարագրե՛ տակաւին իւր ուղեւորութեան ատեն շարունակուող այս դրութիւնը» (19-րդ դարի 40-ական թթ.):

Ըստ ժամանակակցի վկայության՝ այս կիսանկախ վիճակը հետևանք էր այն բանի, որ բոլոր համշենահայերը «զինուոր գրուած են որդուց որդի. եւ ունին գորապետ հայ իշխան, որ զիրենք կը կառավարէ. մարդէ ահ չունին. միայն տերեպէկիին հետ պատերազմ կ'երթան, եւ զօրաւոր մարդիկ են» (Մ.Բժշկեան):

Տրապիզոնի նահագում մինչև 1915թ. որոշ տվյալներով հաշվվում էր 100 հազարից ավելի քրիստոնյա հայ, իսկ իսլամացածների թիվն ավելի մեծ էր: Վերջիններս թեև արդեն շատ էին հեռացել քրիստոնեությունից ու եկեղեցուց, բայց գիտակցում էին իրենց ազգային պատկանելությունը, հիմնականում հայախոս էին և իրենց անվանում էին հեմշիլ՝ մատնանշելով հայկական ծագումը: Հայկական էին նաև բնակավայրերի մեծ մասի անուններն ու այլ տեղանուններ:

19-րդ դարի 60-70-ական թթ. սկսվում է քրիստոնյա համշենահայերի արտագաղթը դեպի ռուսական կայսրության ծովափնյա շրջաններ՝ հատկապես Եկատերինոդարի (Կրասնոդար) մարզ և Աբխազիա: 1890-ականների կոտորածների և հատկապես 1915թ. Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության հետևանքով վերապրած քրիստոնյա համշենահայերի բեկորներն ապաստան են գտնում հիմնականում Ռուսաստանում, Աբխազիայում, նաև՝ Եվրոպական մի շարք երկրներում, մասամբ էլ՝ Հայաստանում:

Ցեղասպանությանը զոհ են գնացել նաև մահմեդական հայեր, քանի որ նրանց մի մասը հայախոս էր:

**Տարածման արեալները:** Եթե մինչև 19-րդ դարի վերջերը և 20-րդ դարի սկզբները համշենահայությունը հիմնականում բնակվում էր Մև ծովի պոնտական ափերին, ապա հատկապես 1915 թվից հետո նրա տարածման արեալն ընդարձակվեց. ցեղասպանությունից փրկված քրիստոնյա համշենահայերի բեկորները հաստատվեցին Մև ծովի ռուսական ափերին՝ այստեղ հիմնելով նոր գաղութներ: Ընդ որում՝ պետք է նշել, որ նոր բնակավայրերը տարածվում էին Աբխազիայից մինչև Անապա ընկած ծովափնյա շերտով մեկ: Այս տարածքները բնակլիմայական պայմաններով նման էին պոնտական ափին՝ լինելով սրա բնական շարունակությունը:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ բռնի իսլամացման երկարատև ու հետևողական քաղաքականության, հալածանքների ու Ցեղասպանության հետևանքով համշենահայությունը բաժանվեց երկու մեծ խմբի՝ թե՛ դավանանքի, թե՛ բնակության վայրի առումով.

1. Թուրքիայի պոնտական ափին բնակվող իսլամացած համշենահայեր,

2. Սև ծովի աբխազական և ռուսական ափին բնակվող քրիստոնյա համշենահայեր:

Նման բաժանման հիմքում ընկած է երեք կարևոր գործոն.

ա. բնակության վայրը,

բ. դավանանքը,

գ. լեզվական-մշակութային հանգամանքը:

Իսլամացած հատվածը բնակվում է Թուրքիայի պոնտական ափին, դավանում է սուննի իսլամը, գտնվում է լեզվական-մշակութային մեկ դաշտում:

Քրիստոնյա հատվածը բնակվում է Սև ծովի ռուսական ափին՝ դարձյալ մեկ պետության կազմում: Հայ Առաքելական եկեղեցու դավանանքի հետևորդ է, գտնվում է միևնույն լեզվական-մշակութային դաշտում:

Այստեղ պետք է կատարել մեկ պարզաբանում. թե՛ ցարական Ռուսաստանը, թե՛ Խորհրդային Միությունը, ըստ էության, նույն պետությունն էին, իսկ Աբխազիայի՝ Վրաստանի կազմի մեջ ձևականորեն լինելն այս տեսակետից էական չէր: Այսօր էլ Աբխազիան փաստորեն գտնվում է Ռուսաստանի ազդեցության տակ:

Հարկ է անդրադառնալ նաև լեզվական հարցում գործող մի հետաքրքիր օրինաչափության. իսլամացած հատվածի համար թուրքերենը մայրենի լեզու է, ընդհանուր՝ բոլորի համար: Սակայն Խոփայի 35-40 հազար հայությունը տիրապետում է նաև Համշենի բարբառին, թեև վերջին 25-30 տարում այն որոշ նահանջ է արձանագրում:

Համանման գործընթաց է նկատվում քրիստոնյա հատվածի մեջ. եթե 50-60 տարի առաջ հայոց լեզուն (նաև՝ գրական հայերենը) հասկանալի էր գրեթե բոլորին և կենցաղում հիմնական գործածական լեզուն էր, ապա այսօր նույնը չի կարելի ասել. հատկապես քաղաքաբնակ համշենահայության մեջ ռուսերենը դարձել է գերիշխող նաև կենցաղում: Իսկ երիտասարդ սերունդը գրեթե ամբողջությամբ ռուսերենի ազդեցության տակ է:

Հենվելով այն իրողության վրա, որ Խոփայի հայությունը տիրապետում է նաև Համշենի բարբառին, Բերտ Վուքսը համշենահայությանն ըստ բնակության վայրերի, դավանանքի և լեզվի բաժանում է երեք հիմնական խմբի.

ա) Արևմտյան համշենահայեր. ապրում են թուրքական Սամսուն, Օրդու, Կիրասուն, Տրապիզոն և Ռիզե նահանգներում: Սրանք հիմնականում թրքախոս են: Դավանում են սուննի իսլամը:

բ) Արևելյան համշենահայեր. բնակվում են Արդվինի նահանգում, հատկապես Խոփա քաղաքում և մերձակա 32 գյուղերում, մասամբ էլ՝ նահանգի Բորչկա քաղաքում: Հայախոս են, պահպանել են Համշենի բար-

բառը: Դավանում են սուննի իսլամը:

զ) Հյուսիսային համշենահայեր. զանգվածաբար բնակվում են Աբխազիայում և Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում, խոսում են Համշենի բարբառի Օրդուի, Ջենիկի, Տրապիզոնի խոսվածքներով, տիրապետում են ռուսերենին, մեկ մասն էլ՝ գրական արևելահայերենին: Քրիստոնյա են՝ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ:

Նման բաժանումը որոշ տրամաբանություն ունի, սակայն անտեսում է առավել ընդհանուր օրինաչափությունները, քանզի եթե որպես պայման ընդունենք լեզվական փաստը, Խոփայի հայերին կարելի է մտցնել երկրորդ խմբի մեջ, իսկ դավանանքի և տարածվածության արեալի հաշվառմամբ այն օբյեկտիվորեն առաջին խմբում է:

Բացի իրենց պատմական հայրենիքից՝ բազմաթիվ համշենահայեր բնակվում են նաև Թուրքիայի այլ բնակավայրերում՝ Իզմիրի շրջանում, Կենտրոնական Ասիայի տարբեր քաղաքներում, հատկապես խոշոր բնակավայրերում՝ Էրզրումում, Անկարայում, Իզմիրում, Ստամբուլում և այլն:

Համշենահայերի համայնքներ կան նաև Ամերիկայի ու Եվրոպայի մի քանի երկրներում: Վերջին տասնամյակներին Թուրքիայից արտագաղթած մահմեդական համշենահայերի (հեմշիլների) նոր համայնքներ են ձևավորվում եվրոպական երկրներում, որոնցից ամենամեծը Գերմանիայում է:

1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Խոփայի շրջանի մի քանի գյուղեր կցվեցին Աջարիայի Ինքնավար Հանրապետությանը (Խորհրդային Վրաստանի կազմում): Այդ գյուղերում 1926թ. մարդահամարի տվյալներով ապրում էր 644 հայախոս կրոնափոխ համշենցի հայ, որից 19-ը՝ օտարահպատակ: 1944թ. Ստալինը նրանց, որպես անվստահելի տարրի, աքսորում է Ղրղրզստան և Ղազախստան: Միայն Ստալինի մահից հետո է այս մարդկանց տրվում անձնագիր, որի մեջ ազգությունը նշող կետի դիմաց գրվում է «խեմշիլ» (իրենք իրենց անվանում էին հեմշիլ-համշենցի), երբեմն էլ՝ «թուրք», այն պատճառաբանությամբ, որ հայերը քրիստոնյա են, իսկ նրանք՝ մահմեդական: 1953թ. հունվարի 1-ի դրությամբ աքսորականների հատուկ բնակավայրերում խեմշիլների թիվը 1397 էր, իսկ 80-ականների վերջերին, ըստ այս հարցի հետազոտող Ս.Վարդանյանի հաշվարկների, ԽՍՀՄ-ում նրանց թիվն անցնում էր 3000-ից:

1980-ականների վերջերին ստեղծված ազգային անհանդուրժողակա-նության հետևանքով նրանց մի մասը ստիպված հեռացավ Ռուսաստան՝ հիմնականում հաստատվելով Կրասնոդարի երկրամասի Ապշերոնսկի շրջանում: Այսօրվա դրությամբ հեմշիլները բնակվում են Ռուսաստանում, Ուզբեկստանում, Ղազախստանում և Ղրղրզստանում: Առաջին երեք երկրներում նրանց երեխաները հաճախում են ռուսական դպրոցներ, իսկ վերջինում՝

դրողական: Հեմշիլները բաժանված են մոտ 30 ազգակցական խմբերի:

Խոսում են Համշենի բարբառով, անուն-ազգանունները հիմնականում թուրքական են: Շատերը հիշում են իրենց հայկական տոհմանունները, գիտեն, որ իրենց բռնի են մահմեդականացրել:

Իսլամացած համշենահայերն իրենց կոչում են հեմշիլ (համշենցի). նրանց այսպես են կոչում նաև թուրքերն ու մյուս ժողովուրդները: Սա խիստ հետաքրքիր փաստ է. կորցնելով հավատը, մեծ մասը՝ նաև լեզուն, նրանք չկորցրին իրենց ինքնության գիտակցությունը, չթրթացան և թուրքերին էլ պարտադրեցին իրենց կոչել այլ կերպ՝ իրենց հայրենիքի անունով:

**Տեղեկություններ համշենահայերի թվի մասին:** Այս հարցի վերաբերյալ հետազոտողներն ունեն տարբեր կարծիքներ, որոնցից ոչ մեկն էլ բնականաբար, չէր կարող հենված լինել քիչ թե շատ հստակ հաշվարկների վրա: Խնդիրը բարդանում է նաև այն պատճառով, որ համշենահայերը տարբեր խմբերի են բաժանվում ոչ միայն ըստ բնակության վայրերի, այլև, ինչպես տեսանք, ըստ դավանանքի ու լեզվի, որն էլ, հատկապես Թուրքիայի պարագայում, լուրջ դժվարություններ է առաջացնում: Հարցի հետազոտողներն էլ հիմնականում անդրադարձել են լեզվի, բանահյուսության, դավանափոխության որոշ խնդիրների, քանի որ թուրքական իշխանություններին հաճո չի եղել հարցի արծարծումը:

Տարբեր հետազոտողներ նշում են տարբեր թվեր՝ մի քանի տասնյակ հազարից մինչև 1,5-2 միլիոն և նույնիսկ ավելի: 25-40 հազար թիվն ընդունողները հավանաբար նկատի ունեն միայն Խոփայի շրջանի հայախոս համշենահայերին: Հավաստի են թվում Ալիե Ալթըրի (Ալիս Կոստանյան) տվյալները. նրա հաշվարկներով՝ Թուրքիայում բնակվում է ավելի քան մեկ միլիոն իսլամացած համշենահայ:

Հեմշիլներ բնակվում են նաև Միջին Ասիայում և Ռուսաստանում: Նրանց ընդհանուր թիվը մոտ է 5 հազարի: Գրեթե բոլորն էլ տիրապետում են մայրենի բարբառին:

Աբխազիայում բնակվող համշենահայերի թիվը 1992-93թթ. վրաց-աբխազական պատերազմից հետո նվազեց մոտ 25 հազարով՝ իջնելով 65-70 հազարի: Արտագաղթածները հաստատվեցին հիմնականում Ռուսաստանում:

Բավական դժվար է որոշ եզրակացություն անելը ռուսաստանաբնակ համշենահայերի թվի մասին. տարբեր հաշվարկներով այն տատանվում է 300-ից 400 հազարի միջև: Առավել հավանական է թվում 300 հազարը:

Հայաստանում չճշտված տվյալներով ապրում է 4-5000 համշենահայ:

Որոշ տեղեկություններ կան Ցեղասպանությունից հետո Եվրոպայի տարբեր երկրներում և ԱՄՆ-ում համշենահայերի՝ բնակություն հաստա-

տելու մասին, սակայն այդ ուղղությամբ ուսումնասիրություններ չկան:

Այս տվյալներով համշենահայերի ընդհանուր թիվը մոտ մեկ ու կես միլիոն է, որը, բնականաբար, չի կարող արտացոլել իրական վիճակը: Որքան էլ այն ուռճացված լինի, այնուամենայնիվ, մի բան պարզ է. մենք գործ ունենք հայության (մահմեդական թե քրիստոնյա) մի ստվար զանգվածի հետ: Թերևս, ժամանակն է, որ, ի թիվս համշենագիտության այլ բնագավառների, լուրջ ուշադրություն դարձվի նաև համշենահայության թվին ու սփռվածության աշխարհագրությանը:

**Համառոտ տեղեկանք համշենագիտության վերաբերյալ:** 19-րդ դարում և 20-րդ դարասկզբին հայագիտության մեջ պոնտահայության նկատմամբ մեծ հետաքրքրություն դրսևորվեց. հրատարակվեցին բազմաթիվ աշխատություններ հայ և օտարազգի հեղինակների կողմից (Ս. Հայկունի, Ն. Խշտյան, Բ. Կյուլեսերյան, Պ. Թումայանց, Վ. Դաշյան, Մ. Բժշկյան Ղ. Ինճիճյան, Ն. Մառ, Ն. Դերժավին, Պ. Կորուլենկո, Ս. Մինցլով, Կ. Կոխ և այլք): Հետագա 50-60 տարիներին այս հետաքրքրությունը տեղի տվեց. այդ շրջանից կարելի է հիշատակել մի քանի անուն՝ Հր. Աճառյան. Լ. Մելիքսեթ-Բեկ, Ջ. Դումեզիլ...

Սակայն 70-ականներից սկսած՝ որոշ դրական տեղաշարժ է նկատվում համշենագիտության մեջ: Ազգային փոքրամասնությունների նկատմամբ աճող հետաքրքրությունը չշրջանցեց նաև համշենահայերին. հայ, ռուս, գերմանացի, հոլանդացի, ամերիկացի, թուրք, վրացի և այլ մասնագետներ (Լ. Խաչիկյան, Բ. Թոռլաքյան, Վ. Բոդյան, Ս. Վարդանյան, Ա. Տեր-Սարգիսյանց, Ժ. Խաչատրյան, Հ. Սիմոնյան, Ջ. Դումեզիլ, Ջ. Ռասսել, Ջ. Վայտենբերգ, Ու. Բլեսինգ, Ռ. Էդվարդս, Բ. Վուքս, Ի. Կուզնեցով, Մ. Սաքաօղլու, Ծ. Բաժաշի, Ի. Շիլակաձե և այլք) վերջին 20-30 տարում հրատարակեցին մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված Համշենի և համշենահայության պատմությանը, ազգագրությանը, բարբառին, դավանանքին, մշակույթին, տարագին և այլն:

Վերջին տարիներին այս հարցով հետաքրքրվողների թիվը գնալով մեծանում է, և ուրախալի է, որ ուսումնասիրողների թվում կան նաև բուն հեմշիլներ: Հիշատակեմ մեկի անունը՝ Ալիե Ալթը, որը ծնվել և մեծացել է Ռիզե քաղաքում, սովորել Ֆրանկֆուրտի համալսարանում: Մկրտվելուց հետո ընդունել է նախնիների ազգանունը՝ Կոստանյան (Ալիս Կոստանյան): Գերմաներեն լեզվով արժեքավոր աշխատություն է հրատարակել իսլամացած համշենահայերի մասին, որը թարգմանվել է նաև հունարեն:

**Հրատապ հիմնախնդիրները:** Համշենահայության հիմնախնդիրները կարելի է բաժանել երկու խմբի.

1. ընդհանուր հիմնախնդիրներ,
2. համայնքային հիմնախնդիրներ:

**Առաջին խմբի** մեջ պետք է ներառել ազգային ինքնագիտակցության, լեզվի, մշակույթի և դավանանքի հարցերը: Սրանք, լինելով ընդհանուր, ունեն ընդգծված յուրահատկություններ իսլամացած և քրիստոնյա հատվածների համար:

**Երկրորդ խմբում** ներառվող հարցերը, սերտորեն առնչվելով առաջինների հետ, ունեն գուտ տեղային-համայնքային բնույթ՝ համայնքային կյանքի կազմակերպում, դպրոց, մշակութային կազմակերպություններ, մամուլ, եկեղեցի և այլն:

Մանրամասնորեն չանդրադառնալով այս բոլոր հարցերին՝ առանձնացնենք լեզվական-մշակութային խնդիրը, որը ռազմավարական առումով գերակա և ուղենշային է մյուս բոլոր հարցերի նկատմամբ:

Իսլամացված հատվածի մեծ մասը, կորցրած լինելով մայրենի լեզուն, վերջին 100 տարում ավելի է հեռացել հայկական ինքնագիտակցությունից: Նրա մոտ նկատվում են նոր ձևավորվող էթնիկ խմբի ինքնագիտակցության սաղմեր, թեև պատմական հիշողությունը դեռևս կենդանի է: Ասվածի լավագույն ապացույցը Խոփայի հեմշիլներն են. նրանց մեջ հայկական ինքնագիտակցությունն ավելի է ընդգծված, քանի որ դեռ չեն մոռացել մայրենի բարբառը. ավելին՝ ոչ միայն նրանց մեծամասնությունը, այլև մյուս ժողովուրդներն էլ (թուրք, քուրդ, լազ և այլն) Խոփայի հեմշիլներին համարում է հայ (երմընի):

Խոփայի հայերի կողմից սեփական ինքնությունը պահպանելու ամենամեծ ջանքերն այսօր էլ արձանագրվում են մայրենի բարբառը պահպանելու ոլորտում, ավելի կոնկրետ՝ սեփական հայաբառ երգերը պահպանելու, տարածելու և, որ խիստ ուշագրավ է ու հեռանակար խոստացող, այդ բարբառով նոր երգեր ստեղծելու գարծընթացներում:

Վերջին 15 տարում Հայաստանի հետ գործարար շփումների շնորհիվ բազմաթիվ խոփացիներ բավական վարժ խոսում են նաև գրական արևելահայերենի խոսակցական տարբերակով: Եվ պատահական չէ, որ նրանց գիտակից տարրի մոտ նկատվում է իրենց երեխաներին կրթության համար Հայաստան ուղարկելու աղոտ ցանկություն, որի հիմնական արգելքը երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունն է:

Հեմշիլները թեև զգալի չափով գտնվում են թուրքական մշակույթի ազդեցության տակ, բայց հիմնականում պահպանել են ազգային ծեսերը,



սովորույթները, երգն ու երաժշտությունը, պարերը, կենցաղավարության շատ յուրահատկություններ: Խիստ ուշագրավ է հետևյալ արտառոց փաստը. բոլոր իսլամացած համշենահայերը (թե՛ հայախոս, թե՛ թրքախոս) յուրաքանչյուր տարի՝ հուլիսի 15-22-ը, Ռիզեի նահանգի Չամլիհեմշին բնակավայրում տոնում են Վարդավառը (Վարթիվոր): Թեև հասկանալի պատճառներով կրոնական ծիսակարգը վերացել է, բայց այն վերածվել է ազգային երաժշտության, պարի ու ավանդույթների թատերականացված յուրահատուկ տոնի (երգերի մի մասը թրքաբառ է, սակայն Խոփայի հայերը պահպանել են նաև հայաբառ երգերը):

Հատկանշական է, որ հիմնականում խուսափում են խառնամուսնություններից և օտար գերեզմանատներում թաղումներից: Իսլամից քրիստոնեություն դարձ կատարած և նախնիների ազգանունը վերականգնած արձակագիր Տիգրան Կոստանյանը վկայում է. «Մեր ծննդավայր Ռիզե քաղաքին բնակիչներեն շատեր գիտեին, թե հայեր են: Մենք գերեզմանատուն չենք ունեցած թուրքերուն հետ, այլ մեր հանգուցեալները կը թաղենք մեր պարտեզներուն մէջ» («Դիտակ», 2002թ. մարտ-ապրիլ, Երևան):

Եթե Աբխազիայում և Ռուսաստանում բնակվող հյուսիսային համշենահայերը պատմությամբ, լեզվական, էթնոմշակութային, կրոնական գիտակցությամբ հայկական ինքնության կրողներ են և հայ ժողովրդի մյուս հատվածներից, որպես մեկ էթնոմշակութային հանրության մաս, չեն տարբերվում, ապա իսլամացած համշենահայերի դեպքում վիճակն այլ է: Ալիե Ալթըն բավական դիպուկ է բնութագրում այդ վիճակը. «Համշենահայերը գտնվում են լճացման առանձնահատուկ մի փուլում, որտեղ խանգարված է մշակութային ուժերի ազատ փոխկապակցությունը. նրա խթանումն ու խրախուսումը դարձել են ժամանակի անհրաժեշտ պահանջ:

Որպեսզի կարողանանք վերարտադրել մեր մշակույթը, որտեղ պահպանված է ամենակարևորը, համշենահայերը որոշել են համշենցիների խորհրդանիշներով ու ծեսերով ամրապնդել ընդհանուր ոգին և դրանով ուժեղացնել միասնության զգացողությունը. դրանք իրականության նրանց հասկացողության, աշխարհընկալման կարևոր բաղադրիչ մասերն են՝ ուզում են նրանք դա թե ոչ:

Լռածների ու լռակյացների բերնից ելնող խոսքը համարվում է հզոր էներգիայի աղբյուր, որի միջոցով մենք մեր կյանքին, գիտությանը, բնությանն ու ամբողջ տիեզերքին իմաստ ենք տալիս: Խոսքի ուժի շնորհիվ մենք կարող ենք ինքներս մեզ ազատել մեր ներքին ու արտաքին վախերից ու բռնություններից կամ թողնել մեզ ստրկացնելու... Խոսքը, ինչպես նաև բառերը մարդկային ինքնագիտակցության հիմնաքարերն են, որոնք բաղկա-

ցած են գիտական բոլոր ուղղություններին»:

Ընդհանրապես շատ ու շատ հարցեր դեռ սպասում են իրենց ուսումնասիրողներին՝ պարզելու, թե հատկապես վերջին 2-3 դարերի ընթացքում էթնոմշակութային ինչ օտար ազդեցությունների են ենթարկվել իսլամացած համշենահայերը, ինչ են կորցրել, ինչ են պահպանել և այլն:

Հայոց լեզվի ընդգծված նահանջ է նկատվում Ռուսաստանի և մասամբ Աբխազիայի համշենահայերի մոտ: Անցյալ դարի 50-ական թթ. Ռուսաստանում փակվեցին հայկական դպրոցները. այսօր մեկական հայկական միջնակարգ դպրոցներ կան Ադլեր քաղաքում, Վերին Լոռ և Սերգեյ Պոլե ավաններում, իսկ շրջանի մի քանի գյուղական դպրոցներ ունեն հայկական բաժանմունքներ: ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի հայությունը, այդ թվում՝ բնականաբար նաև համշենահայությունը, հնարավորություն ունեցավ ստեղծելու համայնքներ, որոնք փորձում են մշակութային խմբերի և գործունեության հնարավոր այլ ձևերով պահպանել ազգային-մշակութային նկարագիրն ու ինքնությունը:

Մշակութային ոլորտում պետությունը նույնպես որոշ աջակցություն ցուցաբերում է. լինելով բազմազգ երկիր՝ այս հարցի նկատմամբ Ռուսաստանն ունի զգայուն վերաբերմունք: Օրինակ՝ Լազարևսկ քաղաքում գործում է ազգային մշակույթների մեծ կենտրոն, որի տարբեր խմբակներում ընգրկված են մեծ թվով հայ երեխաներ: Կենտրոնի տնօրենը ազգությամբ հայ է:

Խորհրդային տարիներին Աբխազիայում հայկական դպրոցների վիճակը կարելի էր համարել նույնիսկ լավ: Այս հարցում Վրաստանի իշխանությունների շահագրգռությունը ակնհայտ էր. ռուսականացման դեմն առնելու համար հայկական դպրոցներին ցուցաբերվում էր բավարար աջակցություն: Սակայն 1992-ից հետո վիճակը կտրուկ փոխվեց: Պատերազմից առաջ Աբխազիայում կար 55 հայկական դպրոց, պետական համալսարանն ուներ և այսօր էլ ունի տարրական դասարանների մանկավարժության բաժին: Սակայն վերջին տարիներին հայկական դպրոցների թիվը գնալով կրճատվում է: Պատճառները բազմաթիվ են. կա ուսուցիչների խիստ պակաս, չկան ծերացածներին փոխարինողներ, ուսուցիչների մի մասն էլ հեռանում է դպրոցից՝ աշխատավարձի սղության պատճառով: Հայաստանի հետ կապի գրեթե իսպառ բացակայության, Հայաստանում ուսումը շարունակելու նյութական դժվարությունների պատճառով հայերը գերադասում են ռուսական դպրոցները: Հայկական դպրոցների թիվն այսօր իջել է 35-ի, իսկ աշակերտներինը՝ 2800-ի, այն դեպքում, երբ ռուսական դպրոցներ հաճախում է մոտ 8000 հայ երեխա:

Հայաստանից ստացվող միակ աջակցությունը դասագրքերն են: Այնինչ դպրոցների պահպանման համար հարկավոր է շատ ավելին՝ ուսուցիչների վերապատրաստում, մեթոդական, ծրագրային և մասնագիտական այլ կարգի աջակցություն, Արխագիայի հայ շրջանավարտների համար Հայաստանում բարձրագույն կրթություն ստանալու արտոնյալ պայմաններ, համայնքի և հայրենիքի միջև կրթական, մշակութային, մարզական, լրատվական, տնտեսական և այլ կապերի հաստատում ու ամրապնդում: Համայնքը անմասն է նույնիսկ Հայաստանում կազմակերպվող համահայկական մարզամշակութային միջոցառումներից:

Մշակութային կյանք, որպես այդպիսին, գրեթե գոյություն չունի: Դպրոցներն իրեց աշակերտական ինքնուս խմբերով կազմակերպում են որոշ միջոցառումներ, նշում ազգային տոները և այլն: Համայնքում կա ընդամենը մեկ քիչ թե շատ կայացած երգի-պարի համույթ՝ «Ծովաշունչը»:

Կա նաև հայ գրողների խմբակ, որը վերջին տարիներին որոշ աշխուժություն է դրսևորում. հրատարակում է սեփական և թարգմանական գրքեր՝ արխագերենից:

Համայնքը չունի հրատարակչություն, տպարան: Հայկական մամուլը սահմանափակվում է «Համշեն» թերթով, որը լույս է տեսնում ամիսը մեկ կամ երկու անգամ՝ սահմանափակ տպաքանակով: Հայաստանից որևէ թերթ, ամսագիր չի հասնում, չեն հասնում նաև ռադիոհեռուստատեսային հաղորդումները:

Այս համատեքստում հատկապես կարևորվում է համշենահայության մեկ միջազգային կառույցի ստեղծումը, որն ի վիճակի կլինի ապահովել միասնական տեղեկատվություն, ընդհանուր խնդիրների քննարկումներ, Հայաստանի և սփյուռքյան կազմակերպությունների հետ անհրաժեշտ կապերի հաստատում և այլն:

## АМШЕНСКИЕ АРМЯНЕ: АРЕАЛЫ РАСПРОСТРАНЕНИЯ И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ

*Айказун Алврцян*

Автор статьи, вкратце касаясь формирования Амшенского княжества и важных этапов истории амшенского армянства, представляет географию его распространения, деление амшенского армянства по языковым и религиозным признакам, дает некоторые сведения о его численности, современном состоянии амшенского армянства и пытается обозначить основные проблемы и трудности, стоящие перед амшенскими армянами в данный период.

Вследствие последовательно осуществляемой Османской империей политики насильственной исламизации, преследований и Геноцида амшенское армянство разделилось на две крупные группы. В основе этого разделения лежали три важных фактора:

1. вероисповедание,
2. культурно-языковой фактор,
3. место жительства.

Исламизированная группа населяет понтийский берег Турции, в основном туркоязычна (хотя амшенские армяне Артвина владеют и родным языком), исповедует ислам суннитского толка.

Христианская и армяноязычная группа населяет российское и абхазское побережье Черного моря, исповедует положения Армянской Апостольской Церкви.

Помимо этих основных мест заселения, амшенские армяне (как христиане, так и мусульмане) живут также в европейских странах, Средней Азии, других областях России, в Армении и т.д.

В стратегическом аспекте культурно-языковая проблема занимает доминирующее и определяющее место в ряду наиболее важных проблем амшенского армянства (национальное самосознание, вопросы вероисповедания и церкви, организация общинной жизни, школа, пресса и т.д.).

В этом контексте особое значение придается созданию единого международного органа амшенского армянства, который сумеет обеспечить создание единого информационного пространства, обсуждение общих проблем, установление необходимых связей с организациями Армении и Диаспоры и проч.